

ամբողջ թաղ մի է։ Համալսարանիս շէնքին մէջն է երկոց արեւմտեան Ռուսիոյ գաւառաց, այսինքն է Քիեւի, Փոտոլիոյ և Վոլինի՝ հնութեանց դիւանն, յորում կը պահուին Հայոց Կամենիցեան մագիստրատին գործերը՝ 104 տարուան միջոցի, այն է 1560—1664, միաժալ, կաշեկազմն, խնամքով գրուած՝ 32 հատ կօճ հատորներ, սակայն որչափ կազմին և գրութեան ձևոյն հոգ տարած են գրողք, կարծես նոյնչափ և աւելի ևս՝ անփոյթ եղած են լեզուին մաքրութեան. զի այդ գրուածքն անհնարին խառնուրդ մի են երեք լեզուաց՝ Հայու, Թաթարի և Լեհի։ Առաջին երկու հատորքն՝ աղաւաղ հայ լեզուով գրած են. 1593 էն կը սկսի Թաթար լեզուն, խառն հայ և լեհ բառերով, սակայն միշտ հայ կօկիկ նօտագրով, 1625 էն տիրած է այդ գրուածոց մէջ լեհ լեզուն։ Քիեւի մէջ մետասաներորդ դարէն սկսեալ՝ հարկաւ շատ հայ գաղթականներ բնակած են, այլ այժմ այնպէս բնաջինջ եղած են՝ որ և ոչ անգամ հետքերնին կ'երևի. քաղաքին հին Փոտոլ կոչուած թաղին Ս. Նիկողայ եկեղեցւոյն համար ինձ գրուցեցին, թէ հինէն Հայոց մնացած չէնք է. այլ ես դիտելով հայութեան ոչ մի նշոյլ չգտայ։ Իսկ Քիեւի մէջ քանի մի հայ ընտանիք՝ ողբա վերջին ատեններս 'ի Ղրիմէ՝ առևտրով հոն անցած են։

Քիեւ հին քաղաք է և առհասարակ Ռուսաց լուսաւորութեան կեդրոնն եղած է իւր հին ակադեմիայիւ. շատ անգամ մերթ Լեհաց և մերթ Ռուսաց ձեռք անցած։ Վերջին ժամանակներս մասնաւոր խնամք եղած է քաղաքին բարեկարգութեան վրայ, Քրիշչարիք կոչուած՝ ընդարձակ և փառաշէն փողոցն՝ Եւրոպայի որ և իցէ քաղաքին